

5580

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ

ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ԺԲ.



1938

ՊԵՅՐՈՒԹ

Լեզուասէր բարեկամներին և ընկերներին

«Յուշագրիս» նման գրութիւններ կարդացող շատ քիչ մարդ կայ մեզանում. հազիւ մի քանի տասնեակ. հետեապէս ոչ մէկ յոյս կայ տպագրութեան ծախքն իսկ դոցելու: Ձեռն համար գին նշանակած եմ մէկ ֆրանք: Ասում եմ «ձեռն համար», որովհետեւ եթէ քիչ է կարդացողը, շատ աւելի քիչ է գնորդը: Ընկերներս ու բարեկամներս գիտեն իմ նիւթական կացութիւնը, գիտեն նաեւ, որ այս տեսակ ծախքերի տակ մտնելու ես հնար չունեմ: Եթէ նրանք ինձ նման այն կարծիքին լինեն թէ Յուշագրերս կարող են պիտանի լինել մեր լեզուի քննութեան համար՝ կը խնդրեմ նիւթապէս ինձ օգնեն այս ձեռնարկութեան մէջ: Յուշագրերս տպագրելու եմ պրակ առ պրակ: Ամեն պրակի ծախքն է մօտ 200 ֆր. 500 օրինակի համար: Ստացած գումարների հաշիւը կը տամ պրակների կողի վրայ: Աւելորդ է ասել թէ աշխատանքիս համար ոչ մէկ դրամ կը հանուի այդ գումարից: Հրատարակուած պրակների ամբողջ պահեստն ու մնացորդ գումարը պիտի մնայ Համագային Ընկերութեան:

Սիրով՝ Ն. Աղբալեան

Հասցե՝

Collège Arménien,
Rue Wadi Abou Djémil, No. 127
Beyrouth, Liban

ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՏԱՐԱԾ ԹԼՈՒԱՏՈՒԹԵԱՆ

Մեր Ա. Յուշագրի մէջ պարզած ենք ծայնի ծագումը և այդ ծայնը համարած ենք մի վաղեմի քմային լ-ի և u ծայնի ձուլման հետեանք, իսկ այդ ձուլումը համարած ենք նրանց միջև եղած վաղեմի ծայնաւորի չքացման հետեանք և հոլովոյթի ծիրը տարադած ենք իբր $l + u \rightarrow ts \rightarrow d$: Գիտունները սակայն մեր ծայնը համարում են կշորդ յոյն և սնսկր. ց ծայնի, որով ց և ծ համարում են լծորդ: Այսպէս՝ յուն. mégas — հայ. մեծ. սնսկ. bho'gas — հայ. բոյժ: Ինչպէս տեսնում էք քոյր լեզուների ց ծայնին հայերէնը տալիս է ծ կշիռ¹⁾: Բայց յոյնն ունի ego', իսկ հայն ունի ես և ոչ եծ, որ սպասելի էր, քանի որ յոյն ց-ի դէմ հայը պէտք է տար ծ կշիռ, դրա փոխարէն հայն ունի u: Բայց միայն հայը չէ, որ այդ տեսակ փոքրանք է ստեղծում: Ահաւասիկ սլաւ լեզուն. մեր ես-ի դէմ նա բերում է yaz, az, որ նոյնպէս չի բռնում յոյն ego'-ին, բայց մօտէ մեր ես-ին: Այդպէս եղած է և մեր հայրենիքի սեպագիր լեզուում, ուր i-e-s նշանակած է ես²⁾:

Այս անախորժ հակասութիւնը Ա. Մէյլէ փորձում է լուծել ասելով թէ. «Ուրիշ բաղաձայնի, և յատ-

¹⁾ A. Meillet. Esquisse, § 19 և § 24.

²⁾ Հ.Յ. Տառեան. Ուսումն դասական Հայ. լեզուի, էջ 380:

կապէս կոկորդային բաղաձայնի կամ կէս-պայթուցիկ մի ձայնի առջև կէս-պայթուցիկները փոխադարձաբար դառնում են սոյլ կամ շաշող. կիծ-ի կրկնաւորը կիսկիծ (որ ծագում է «կիծկիծ» ձեւից), կոճկոճ (կոճկոճ ձեւից)... Արդ՝ ես, որ կշռում է յոյն *ego*-ին, լատ. *ego*-ին եւ որ պիտի ունենար ծ, ինչպէս մեծ բառն ունի յուն. *mégas*-ի համեմատութեամբ՝ ա՛յն ձեւն է, որ նախնաբար կիրարկուում էր մի հետեւորդ բառի բաղաձայնի առջև (*Esquisse*, § 14): Ասածի միտքն այն է, թէ մեր եւր նախապէս եղած է եծ. բայց ինչպէս կիծ՝ բառի ծ-ն իր կրկնաւոր ձևի մէջ հետեւորդ կիծ բառի բաղաձայն կ ձայնի առջև դարձած է ս եւ բառն եղած է կիսկիծ→կսկիծ՝ այնպէս և մեր վաղեմի եծ ձեւը, երբ յետեւից եկած է բաղաձայնով սկսուած մի բառ՝ հնչուած է ես: Այս հանդիպումները յաճախ պատահելով և եծ բառի ծ-ն յաճախ ս-ի անցնելով՝ ես ձեւն է ընդհարացած, իսկ եծ ձեւը կորած է ընդմիշտ: Մի կողմ եմ թողնում այն հանգամանքը, որ չի մեկնուած թէ ինչու ծ-ն պէտք է տար ս և ոչ ուրիշ ձայն. փաստական կացութիւնն այդպէս է ներկայանում մեծանուն գիտունին: Բայց ինչու ես ձեւն ընդհանրացաւ և ոչ եծ ձեւը. միթէ Հայոց բառերը գերազանցապէս «բաղաձայն և յատկապէս կոկորդային բաղաձայն և կէս պայթուցիկ» ձայներով էին սկսւում. միւս ձայներով և ձայնաւորներով սկսուած բառերը նուա՞ղ յաճախ էին գալիս ենթադրական եծ դիրանունից յետոյ: Եւ ապա՝ մեր լեզուն իր բայական կաղմի շնորհիւ պէտք չունէր յաճախ կիրարկելու իր դերանունը, քանի որ բայաձեւն ինքնին իր ձևի մէջ մատնանշում է իր գէմքը: Այսպէս Գ. սաղմոսի մէջ ես բառից յետոյ երկու անգամ ձայնաւոր է գալիս. «այլ հս ըստ բաղում...» և «ես

ըղքեղ կարգացի...¹⁾ Գ. սաղմոսի մէջ երկու անգամ ձայնաւոր. «ես առ տէր կարգացի... Ոչ երկեայց ես ի բիւրուց... և մեկ անգամ բաղաձայն. ես ննջեցի և ի քուն եղէ... է. սաղմոսի մէջ երեք առիթ կայ ես կիրարկելու և չի կիրարկուած, «Ի քեզ յուսացայ...» Թէ արարի դայս... Թէ հատուցի երբեք... Եւ յետոյ՝ մի-թէ միայն նախաւոր եծ բա՞ռն էր, որ ծ վախճան ունէր. ինչու միւս բառերի ծ ձայնները նոյնպէս չեն հընչած ս, երբ ընկած են բաղաձայնով սկսուած բառերի առջև: Սաղմոսի պէս մի գրութիւն, որ գերազանցապէս անձնական է, էջեր ունի, ուր ոչ մէկ ես կայ, օր. Ա. սաղմոսը: Ուղում եմ ասել, թէ եծ ձեւն այնքան շատ չի կիրարկուում, որ այդ հանգամանքը արտօնէր նրան իր ծ-ն ս-ի փոխելու, իսկ Աստուած բառն օրինակ նրանից պակաս է կիրարկուած բաղաձայնով ըսկսուած բառերի առջև, ուստի և այդ իսկ պատճառով պահած է իր ծ-ն: Անշուշտ դասական լեզուն նախագրական հայերէնը չէ, բայց բառերի և ձևերի կիրարկութիւնը ոչ ոք կառող է ասել թէ նոյն տոկոսական յարաբերութիւնը չունէր նաեւ ա՛յն ժամանակ, այսինքն՝ չենք կարող ասել, թէ վաղեմի հայը աւելի շատ բաղաձայնով սկսուած բառ էր կցում իր եծ դերանունին և աւելի յաճախ էր եծ կիրարկում քան դասական շրջանի հայը: Գալով սլաւ *ya* և *az* ձևերին, որ հետագային «ընդհանրապէս» ամփոփուած են իբր *ya* (օր. ոտս լեղում, ուր *ya* նշանակում է ես) Ա. Մէյէն այդ ձևերը համարում է «առեղծուածային». չի փորձում մեկնել *z*-ի ներկայութիւնն այդ ձևերի մէջ, ինչպէս

¹⁾ Իսկ եթէ *rus* Ն. Մառի ընդունինք, որ «գեբ» արտաբերուած է «գրեբ» — ապա՝ մեկ անգամ ձայնաւոր եւ մեկ անգամ բաղաձայն:

92301-42

9/2-2002



տեսանք թէ փորձում է հայոց եւ բառի աւի համար, և դժուարութիւնից ազատուում է ասելով թէ պաշ բառն «ուրիշ արմատ ունի քան այդ բառի միւս հոլմերը»¹⁾ որ նշանակում է թէ այդ բառն իր երկու ձեւերով չի համարում յոյն ու լատին *ego* ձեւերի կշիռ, ինչպէս համարած էր մեր Խոր:

Բայց կայ աւելի կնճառաւ մի երեւոյթ, որ մերձուստ կապուած է ց-ծ լծորդութեան: Միայն մեր լեզուն չէ, որ հազադային պայթուցիկ ձայնին տալիս է կէս պայթուցիկ կշիռ: Այս տեսակէտով քոյր լեզուները երկու խումբ են կազմում— Արեւելեան և Արեւմտեան: Աւատին զս ձայնին (չրթնաքմային) Հինդ-Իրանեան լեզուները տալիս են մաքուր *k* կշիռ, (որ նախաքմայինի առջև հնչում է իբր *ç*). Իսկ նախաքմային կակղացած (*mouillé*) մի ձայնի, որ իր կակղացման հետեւանքով իսկ բնափոխուած է, ինչպէս սնակ. *q*. հայ ց և այլն՝ լատինը դիմարկում է մի մաքուր հազադային *q*: Հինդ-Իրանեան տիպարին են պատկանում սլաւ, բալտիկ, հայ և ալբան լեզուները. իսկ միւս խմբին՝ յոյն, լատին, կելտական և գերման լեզուները²⁾: Այսպէս նախալեզուի արեւելեան ճիւղի *k* (*k*) ձայնը նախասլաւ լեզուի մէջ տալիս է *k* կշիռ, որ նախաքմային *h* և *b* ձայնաւորների առջև հնչում է իբր *ç* և *g*, որով *չ*-ն և *ց*-ն ուրիշ բան չեն, քան վաղեմի *k* ձայնը, որ բնափոխուած է որոշ պայմաններում: Հնդկերոյ. *ka*, *ko* վանկերը նախասլաւ լեզուի մէջ հնչած են իբր *ka*, *ko*, իսկ *ke*, *ki* վանկերը հնչած են իբր *չե*, *չի* և *ցե*, *ցի*: Ես մի կողմ եմ թողնում միւսնոյն հեղինակի յայտնած անմիաբան կարծիքները

¹⁾ A. Meillet. *Le slave commun*; § 514.

²⁾ A. Meillet. *Les dialectes indoeuropéens*, էջ 49.

միւսնոյն ձայնների մասին. խօսելով հայոց լեզուի *չ* և *ց* ձայների մասին Ա. Մէյլէն ասում է թէ դրանք «միշտ ներկայացնում են բաղաձայների խմբեր»¹⁾, իսկ նոյն *չ* և *ց* ձայները սլաւ լեզուի մէջ նրա կարծիքով ուրիշ բան չեն քան բնափոխուած մի վաղեմի *k* ն՝ նախաքմային ձայնաւորների առջև: Կարեւորն այստեղ դիտուած երեւոյթն է: Այսպէս ուրեմն տեսանք թէ գիտունների կարծիքով ց և ծ լծորդ են. իսկ հիմա տեսանք թէ որոշ պայմաններում լծորդ են նաեւ *k* և *չ* ու *g*. (այսինքն՝ ե հւ. ի ձայների առջև):

Իսկապէս զարմանալի է այս երեւոյթը: Գլխաւորապէս կամ կողորդային ձայն է. նա կազմում է բնական խոռոչի խորքում. այդպէս է և *k* ձայնը, որ լծորդ է *q*-ին: Մի կէս-պայթուցիկ է. նա կազմում է բերանի խոռոչի առջևի մասում. վերին ատամնաշարի և քիւքրի միջեւ. նոյն տեղերն են կազմում նաեւ *չ*-ն և *ց*-ն: Արդ՝ ինչպէս կարող է մի անցում լինել կողորդից մինչեւ աստամնաշարը և ինչպէս կարող է *q*-ը ծ հնչել: Սլաւ լեզուի համար դո՛ւնէ մի պայման կայ. այդ անցումը կատարւում է երբ ձայնաւորը ե է կամ *h*. մեր լեզուի համար այդ պայմանն իսկ չկայ. այնտեղ ուր օտարն ասում է *q*, մենք ասում ենք *ծ*: Պէտք է մի լաւ պրպտել այս խնդիրը, տեսնելու համար թէ արդեօք թիւրիմացութիւն չկա՞յ կա՞մ երեւոյթի վերլուծութեան կա՞մ նրա բանաձեւումի մէջ:

Տեսնենք թէ դասողական ո՞ր ճամբով են գիտունները մշակած այն տեսութիւնը թէ մեր *ծ*-ն կշիռն է *q*-ի: Նրանք քննած են մեր այժ և մեծ բառերը եւ զուգադրած են նրանց յոյն *mégas* և *aigo's* բառերին, որ նոյն իմաստն ունին, միայն թէ *aigo's* սեռ. հոլով

¹⁾ Esquisse, էջ 17, III.

է օօօք բառի: Չուզադրելով ստացած են այսպիսի պատկեր.

mégas	aigo's
մեծ	այծ

Նրանք գիտեն, որ բառերի վախճանական վանկերը յաճախ անշեշտ մնալով՝ ընկնում են. միւս կողմից տեսնում են, որ հայոց լեզուի մէջ չկան as, os, is, us վախճանով բառեր: Ենթադրում են, որ ուրիշ լեզուներէ պէս հայոց լեզուն ևս ձգած է այդ վախճանները և այդ հիման վրայ մտովին յապաւում են յոյն բառերի as և os վախճանները և նորից զուգադրում են իրար մեր ու յոյն բառերը. այսպէս՝

még (as)	aig (o's)
մեծ	այծ

և պարզ տեսնում են, որ յոյնի ց-ին հայը տալիս է ծ կշիռ: Ստուգում են այս վարկածը ուրիշ բառերի վրայ. տեսնում են սնակ. bho'gas և հայերէն բոյծ. յուն géro'n և հայերէն ծեր, յուն génos, լատ. génius և հայերէն ծին. — այլ ևս կասկած չի մնում, որ ց և ծ ընդդէմ են: Այսպէս է մշակուած այդ տեսութիւնը:

Այդ տեսութեան հիմքերից մէկն այն է ուրեմն, որ as, os, is, և այլ վախճաններն ըկնում են: Գիտունները չեն անդրադարձած, որ այդ վախճանները կարող էին նաև ձուլուիլ: Եւ դժուար էր ենթադրել, քանի որ օրինակ՝ - gos վախճանական վանկը ձայնաւորի սղումով տուած է ks, ուր թէև բնափոխուած է ց-ը և հնչում է k, բայց ձուլում չկայ:

Aiks - aigo's հոլովումը զուգահեռ է մեր սե'ւմն - սեւման հոլովումին: Վաղիմի aigo's՝ աղած ու կոյցը բաժն է իր վերջին անշեշտ ձայնաւորը և բառը հնչած է օօօք, ուր այդ առիթով ց-ը բնափոխուած է

k-ի և բառը դարձած է օօօք ինչպէս մեր բն հետևորդ ձայնաւորի սղման և կորուստի հետևանքով. այսպէս՝ թաղիք — թաղիկ, որ ամփոխուին է թաղիքի և և: Բայց անհնարին է, որ օօօք օրինական ամփոխումը լինի մի վաղեմի *օօօք բառի, որի k-ը ոչ թէ բնափոխուած լինի, այլ բնաբոյս, իբր զուգահեռ մի նախաւոր բայց կորած օօօք ուղղական ձևի, որով յոյնը ունեցած լինի երկու ընդդէմական նոյնական հոլովական զոյգեր, որոնցից մէկի ուղղականը չքացած լինի, իսկ միւսի սեռականը. և մնացորդ ձևերը դարձած լինին մէկը միւսի լրացուցիչ հոլովը, ինչպէս մօր պաւսաւն (պաշտօն) և պաւսաման ձևերը, ուր մէկի օրինական սեռականը չկայ, որ պիտի լինէր *պաւսաւն. հմ. անո'փն - անոփան. և միւսի ուղղականն է չքացած, որ պիտի լինէր *պաւսամն. հմ. սերմն - սերման: Վերապրած ձևերը իրար լրացնում են, մէկը կատարելով ուղղականի դեր — պաւսաւն (պաշտօն), միւսը՝ սեռականի. — պաւսաման: Այսպիսի մի դէպքում մեր ծ-ն ոչ թէ ց-ի, այլ k-ի կշիռը կը լինէր. *օօօօ(k) — այծ: Այս դէպքում պահուած կը լինէր ձայնական երանգների ներդաշնակութեան սկզբունքը, որով լեռի ծ-ն կշարժ կը լինէր լեռի կ-ին և ոչ թէ միջակ ց-ին, որի կշիռն ըստ այդ տեսութեան պիտի լինէր օ (միջակ) — օօօք — այծ:

Բայց մենք պէտք չունենք յոյն ձևերի մանր քննութեան մէջ մտնելու: Եւ հարց կ'առնուի. քանի որ մեր տեսութեամբ մեր ծ-ն մի հին ts է, չ-ն մի հին sc և ց-ն մի հին su, որ անփոփոխուած են. ու քանի որ սլաւ լեզուի մէջ կ-ն է որի կշիռն են դառնում չ-ն և ց-ն (թէկուղ և ե և ի ձայնների առջև), արդեօք մեր բաղադիր ձայնների քմային և առամնային s-ը և t-ը չեն, որ կշռում են կ ին, ուրիշ խօս.

քով՝ արդեօք սխալ չէ՞ այն բանաձևումը թէ ց ձ և k չ, ց լծորդ են: Պէտք չէ՞ արդեօք այդ երևոյթը բանաձևել ասելով թէ լծորդ են կ և s, t և ուրիշն բառերի as, is, os, us վախճանները ոչ թէ չփացած, այլ ձուլուած են՝ իրենց միջի ձայնաւորի կորուստի հետեւանքով: Այս դէպքում aigo's (= *aiko's) ձեւի չեղար պէտք չէ, որ վերջին վանկին զարկէր, այլապէս ձայնաւորի սղում և չքացում չէր կարող պատահել, հետեւապէս և եղբարկան ձայները չէին կարող ձուլուիլ: Այդպիսի հոլովական կարգ պահած է Թիֆլիսի բարբառը, որ չեղար պահում է անփոփոխ թէ՛ սեռական և թէ՛ ուղղական հոլովներէ մէջ: Այդպէս է և վրացերէնը, օրինակ՝

Ուղղական	Սեռական	(չեղան անփոփոխ)
հայերէն՝	ֆա'ղաֆ	ֆա'ղկի » »
վրացերէն՝	կա'ցի (մարդ)	կա'ցիոա (մարդու) » »

Մեր ենթադրութեամբ՝ յոյն նախաւոր ուղղակաւոր երբ k ունենար՝ պիտի հնչէր *a'ikos, որ պիտի դառնար a'iks, ինչպէս որ է իրօք. իսկ հայ նախաւոր ձեւը, k-ին տալով t (քմային) կշիռ՝ պիտի լինէր a'it + 2 + u և պիտի դառնար a'its, որ քմային t-ի և u-ի ձուլումով պիտի տար այժ (ts — ծ): Իսկ ենթադրական *a'igos ձեւը նոյն հիմքերով և բաղաձայնների երանդների ներդաշնակութեամբ՝ պիտի հայերէնի մէջ դուգահեռ ունենար *a'idz, ուր dz ձուլումով պիտի տային ձ և բառը հնչէր այձ: Այս տեսակէտով k = չ, ց լծորդութիւնը պահում է բաղաձայնների երանդների ներդաշնակութեան սկզբունքը. լերկ է կ-ը, լերկ են և չ-ն ու ց-ն: Նոյն հիմքով մեր ծ-ն ոչ թէ գ-ի, այլ կ-ի լծորդ կարող էր լինել, որովհետեւ նրա բաղադրիչ l (քմային) ձայնը լերկ է:

Սրանով մենք ճշտած եղանք երևոյթի բանաձևումը, բայց չվերացաւ դժուարութիւնը: Ընդունինք թէ ծ-ն ոչ թէ ց-ի, այլ k-ի կշիռն է՝ իբր լերկ՝ լերկի. ընդունինք նաև որ ո'չ թէ ծ-ն է k-ի կշիռը, այլ ծ-ի բաղադրիչ քմային t ձայնը, քանի որ ծ-ն մի հին ts է, որ ձուլուած է: Բայց ի՞նչպէս կարող է կ-ը, որ մի կոկորդային ձայն է, կշիռ դառնալ t-ի, որ մի ատամնաքմային ձայն է:

Կարող ենք օգնութեան կանչել մեր բարբառական «կի գամ» և «սի գամ» ձեւերը իբր դուգահեռ երևոյթ¹⁾. Բայց դրանով խնդրի լուծումը դառն չենք լինի, այլ միայն մի նոր փաստ տուած կը լինենք k-ի լծորդութեան՝ այս անգամ ատամնային և ոչ քմային s-ի հետ: Եւ յետոյ՝ սի բառը մենք կարող ենք համարել պիսի բառի ծայրագոյն անփոփոխում՝ պայթուցիկի անկումովը պայթուցիկի առջև, այսպէս՝ պիսի գամ — պրսի գամ — (ի-ն սղած), ժխտական ձև — չրպ-sի՛ գամ (ը-ը չքացած), — պսի գամ (ը-ն աննշան, աննկատելի), սի գամ (պ-ն ընկած. հմ. Կտեսիֆոն — Տիգրան): Պարզ է, որ այստեղ սի բառի s-ը ոչ մէկ առնչութիւն ունի կի բառի կ-ի հետ, հետեւապէս նաև կ-ը s լծորդութեան հետ:

Պէտք է գտնել կ և s լծորդութեան պատճառը:

¹⁾ Ժողովրդական պարերգն ասում է (Ախալցխա).

Դե գնա՛ կի գամ, դե՛ գնա՛ կի գամ, շուս կի գամ.
Կարմիր սօլերա հագնիմ՝ կի գամ, շուս կի գամ:

Գիտութիւնն ասում է, թէ այսօրուան բանական մարդը հազարաւոր դարեր առաջ եղած է մի անբան անասուն. իր նստատեղի մանր ոսկորները, որ մի մատնաչափ կցուածք են, երբեմն կաղմած են մի կանգնաչափ պոչ: Պոչը չքացած է, բայց հետքը մնացած է: Հինը չի մեռնում. սքողւում է: Այդպիսի մի հին մնացորդ եմ համարում ես թլուատութիւնը:

Թլուատ ասում են այն երեխաներին, որ կ-ն արտաբերում են s: Դու ասում ես. տակ, նա կրկնում է՝ տաս. ասում ես՝ կէս, կրկնում է՝ սէս: Նրա համար ականջն ասանջ է և Մակարը՝ Մատար: Բոլոր զիրքերի մէջ — բառակղբին, միջին թէ վերջին՝ նրա համար կ-ը s է: Այս երեւոյթը հայկական չէ. եւրոպացի երեխան նոյնպէս, երբ թլուատ է՝ կ-ն արտաբերում է իբր s¹⁾: Ի՞նչն է այս երեւոյթի պատճառը. արդեօք ականջն է թերի, որ չի տարբերում կ և s ձայները, թէ՞ բերանն է թերի, որ անկարող է կ արտաբերել: Ինչ և լինի պատճառը՝ երեւոյթը համատարած է: Համատարած է, սակայն զարտուղի երեւոյթ է, սովորական չէ:

Բայց ի՞նչ է այս անսովոր երեւոյթի բնոյթը, նա

1) Տես H. Delacroix, Le langage et la pensée, էջ 292, ուր հեղինակը Jespersen-ի և Grammont-ի հետազոտութեանց հիման վրայ՝ ասում է. երեխաները «յաճախ ասում են s փոխանակ կ-ի: Պատճառն այն է, որ այս երկու ձայները առաջանում են երբ լեզուն լիովին ընդհատում է շունչի ելքը. բայց մի գէպքում իր ծայրով, միւս գէպքում իր սապատով: Մի երեխայ, որ s-ն է ասում կ-ի փոխարէն՝ նա դ կ'ասի զ-ի փոխարէն»: Անշուշտ եւրոպացի երեխաների արտաբերութիւնը քննելով է, որ արած են այս զիտոշութիւնը և եկած են այս եզրակացութեան:

մի նորակաղմութիւն է թէ մի առհաւութիւն:

Երեխաներ կան, որ ծնւում են բաւական նկատելի պոչով: Գիտութեան համար այդ երեւոյթն առհաւական է. երբեմնի համատարած պոչն է, որ բացառաբար երեւում է այդ մանուկի վրայ: Նրա պոչը ոչ թէ մարգարէական երեւոյթ է, որ գուշակում է ապագան, այլ մի առհաւական երեւոյթ է, որ յիշեցնում է վաղեմի անցեալը: Մանուկն իր պոչով ոչ թէ մարդկութիւնը տանում է գէպի մի նոր վիճակ, գէպի պոչաւոր մարդկութիւն, այլ հին պոչաւոր մարդակերպ անասունի յետին շառաւիղն է նա: Արդ՝ ի՞նչպէս գնահատենք թլուատութիւնը՝ դա մի արկած է թէ մի հետք. մարդիկ գնում են գէպի համատարած թլուատութիւն և թլուատ երեխան դալիք մարդկութեան մի վաղահաս պտո՞ւղն է թէ՞ մի հին թլուատ մարդկութեան վերջին նմուշը: Ես ասում եմ. թլուատութիւնը արկած չէ. նա օրգանական թերութիւն է, նա զուգահեռն է հին պոչի. նա հին վիճակի վերերեւումն է և ոչ գալիք վիճակի մի գուշակ: Մի ժամանակ ամենեւնի եղած են թլուատ, ինչպէս ամէնքը՝ պոչաւոր. այսօր մի քանի երեխայ ծնւում են թլուատ ինչպէս մի քանիսն են պոչաւոր ծնւում: Դա մի «թերութիւն» է մեր աչքին, բայց իրօք հին վիճակի մի ապստամբ մնացորդն է, ինչպէս ազգապղծութիւնը կամ ոճիրը, որ առհաւական են:

Թլուատ երեխաներն անարգել արտաբերում են s և անկարող են կ-ը ձանաչել և արտաբերել. սա նշան է, որ իր արտաբերական գործարանի մէջ s-ն աւելի կայուն յարմարութիւն ունի քան կ-ը: Ժամանակի ընթացքին թլուատութիւնը սովորաբար վերանում է: Ի՞նչն է պատճառը այս երեւոյթի: Արդեօք երեխայի բերնի մէջ մի թերի կար, որ լրանում է և բերանը յարմարութիւն է ձեռք բերում կ արտաբերելու, թէ՞ լսողութեան ջղի մէջն էր թերին, որ ուղեղի վրայ

կ-ի ձայնական դրօշմ չէր ստեղծում, ուստի երբ կրնդորոնը շարժում էր ձայնածին կամ ձայնարար նեւարդերը՝ իբր արդիւնք ստացւում էր *ս* և *ոչ* կ, որովհետեւ կենդրոնը կ-ի դրօշմ չէր ստացած: Ինչ և լինի այս երևոյթի պատճառը, մենք մեր առջև ունինք ձայնարար կամ ձայնածին մի կառուցուածք, որ անկարող է կ յօրինել և արտաբերել: Այդ կառուցուածքը հին է, առհաւական և երբեմն եղած է համատարած: Թլուատ երեխան աշխարհ է գալիս վաղեմի մարդու արտաբերական այն կառուցուածքով, որ անկարող էր կ յօրինել, ինչպէս պոչաւոր երեխան ա՛յն մարդկութեան հեռաւոր մէկ նմուշն է, որ պոչ ունէր: Եւ ինչպէս երեխայի պոչն արագօրէն անփոփոխւում է — կարճ ժամանակի մէջ անցնելով այն հոլովոյթը, որ հաղարաւոր դարեր է տւած, այնպէս և թլուատ երեխան արագօրէն ձեռք է բերում կ արտաբերելու յարմարութիւնը:

Այն հանգամանքը, որ թլուատ երեխային կ-ի արտաբերութիւնն է պակասում և ոչ թէ *ս-ի*՝ ինձ բերում է այն եղրակացութեան, որ *ս* արտաբերելու ունանկութիւնն աւելի հին է, քան կ արտաբերելու յարմարութիւնը: Մարդու բերանը նախ *ս* է արտաբերած և ապա միայն կ: Տաւ աւելի հին ձայն է, քան կ-ը: Մարդու մէջ ինչ որ նոր է՝ աւելի շուտ ենթակայ է կորուստի քան ինչ որ հին է: Մարդու եւն աւելի նոր է քան իր մարմինը, ուստի երբ խաթարւում է եւ-ը (խենթը, խելագարը)՝ մնում է անբան անասունը, որ շարունակում է խօսել և ապրել, որովհետեւ մարդը շատ աւելի երկար դարեր խօսած ու ապրած է, քան մտածած, զգացած ու կամեցած: Այդպէս նաև մարդն ատամով է կրծում ու կտրում միսը, երբ դանակ չունի, և բերանը ջրին ընկած է խմում՝ երբ բաժակ չկայ, որովհետեւ մշակոյթն աւել-

լի նոր երևոյթ է քան կրծող ու խմող մարդը: Մարդու մէջ «անասունն» անհամեմատ հին է, քան «մարդն» ու «մարդկայինը» և երբ կորչում է «մարդկայինը»՝ մնում է անասունը: Այսպէս ուրեմն՝ ես կարծում եմ, որ *ս-ն* աւելի հին է քան կ-ը և որ նախ քան կ-ի երևումը՝ *ս-ը* համատարած մի ձայն էր:

Հնագէտները քննելով վաղեմի մարդկութեան բնակարանի ձևը, նրա թաղման կերպերը, նրա թողած ամանների գծադարպերը, նրա ուտեստի մնացորդները և այլն՝ գծում են այն ծիրը, որով անցած են թափառական հին ցեղերը քառական չրջանից սկսած՝ երբ սառցային մակերեսը գէպի հիւսիս քաշուելով՝ երկիրը բացուած է և ապրելու յարմարութիւն է տուած: Այդ ծիրն սկսւում է եւրոպական ցամաքի հարաւարեւմուտքից և Գերմանիայի մէջ տեղով, Լեհաստանի վերելով անցնում է հիւսիս-արեւելք և Ուրալի շղթան քերելով հարաւից՝ երկարում է Սիբիրի վրայով գէպի Խաղաղական: Սիբիրի մէջ այդ ծիրը թեքւում է գէպի հարաւ և ղիմում է գէպի Իրան և Հինդուքուշ: Էսքիմոսները համարւում են այդ վաղեմի մարդկութեան վերջին մնացորդները: Ոչ ոք գիտէ թէ ի՛նչ էր այդ վաղնջական ցեղերի լեզուն: Բայց այն բնավայրի մէջ, ուր սկսւած է թափառման այդ ծիրը՝ այսօր խօսում են հնդեւրոպական լեզուներ: Նոյն լեզուները խօսած են և պատմութեան արշալոյսին, որից մնացած են գրաւոր հետքեր և աւանդութիւններ: Թափառումի այդ ծիրով նկատւում են և վերադարձի հետքեր, որ սակայն կանգ են առնում

լեհաստանի արեւելեան կողմերը¹⁾ Գիտունները նկատած են, որ մշակութային զարգացման տեսակէտով Արեւելքը միշտ յետ է մնացած Արեւմուտքից. բնավայրից առաջին մեկնածները դարեր յետոյ դեռ մշակոյթի աճին ստատիստի վրայ էին, որ ունէին մեկնած ժամանակ, մինչդեռ բնավայրի մէջ մնացածները շատ աւելի բարդ և զարգացած մշակոյթ են թողած միևնոյն դարերից:

Տեսանք թէ մեր տեսութեամբ կը տեսնուի յետոյ է երեցած: Ենթադրում եմ, որ նախնական ցեղերը մի միայն *s* - ունէին երբ ճամբայ ընկան դէպի հիւսիս արեւելք: Իրենց բնավայրի մէջ մնացածները յետագային ստեղծեցին կ' *ձայնը*, այսինքն՝ իրենց անորոշ ձայները միջից մաքրեցին ու զտեցին կ' երանգով կոկորդային հնչիւնը: Երբ այս նոր ցեղերը, որ ունէին *h'* և *h* իրենց նախորդների թափառման դժով շարքուցին դէպի հիւսիս արեւելք՝ իրենց ճամբին հանդիպեցին վաղընթաց ցեղերի բնավայրերին. ցեղեր, որ միմիայն *s* ունէին և յետամնաց վիճակում էին նորեկների համեմատութեամբ: Տիրելով նրանց կամ դառնալով դրկից և տեական շփումով խառնուելով նրանց հետ կամ աղբւրով նրանց վրայ՝ նորեկները հներին փոխանցեցին իրենց կ'-ով բառերը, որ սակայն հները «թլուատաբար» արտաբերել կարող էին *s*-ով, քանի որ կ' ձայնը չունէին: Այսպիսով պիտի ստեղծուէին միևնոյն բառի արտաբերական կրկնակները *h'* և *h*-ով *h'* և *s*-ով. մէկն իբր նոր եկած և յառաջա-

¹⁾ Տես. Պ. Միլիկով. Ուրուագծեր ուսումնական կոյթի. հատոր Ա., մասն Ա. յօդուհանական հրատարակութիւն, 1937, (ռուսերէն), ուր մեծանուն գիտունը պայծառօրէն ամփոփած է հնագիտութեան վերջին արդիւնքները:

դէմ ցեղի նորաստեղծ արտաբերութիւն, միևն իբր այդ նորաստեղծ արտաբերութեան թլուատ ընդօրինակում:

Գաղթի ճամբին բնական է, որ թափառականները գրաւեցին առաջին հանդիպած յարմար վայրերը. նրանցից յետոյ եկողները ստիպուած էին աւելի հեռուները գնալ՝ յարմար բնավայր ու նիստ գտնելու համար. որով արեւմտեան սահմանների մօտ շատ աւելի հոծ բազմութիւն կար նստած առաջին գաղթից մնացած, որ *s* ունէր միայն, քան թափառման ծիրի հեռաւոր ծայրերում: Նաև կ' ցեղի գաղթի ժամանակ (այդպէս անուանում եմ այն ցեղերը, որ «ստեղծած» էին կ' ձայնը) իբր մշակութապէս աւելի բարձր ցեղեր՝ նրանք աւելի մեծ խմբերով պիտի նստէին առաջին կայանների մէջ, ուր արդէն հին գաղթի հոծ բազմութիւն կար նստած, որի աշխատանքը կարող էին օգտագործել նոր տէրերը, քան թէ հեռաւոր կայանների մէջ: Լեհաստանի հիւսիս արեւելքը և աւելի հիւսիս-արեւելք՝ Ռուսաստանի մէջ պիտի այդ հանդիպումն ու փոխազդեցութիւնը աւելի զօրաւոր և նկատելի լինէր: Հնագիտութեան պեղումները այդ ենցոյց տալիս. այդ կողմերն է, ուր հին ու նոր հետքերը իրար վրայ նստած են շերտ-շերտ, մինչ աւելի հեռուները համեմատաբար տիրապետում են հին շերտի հետքերը: Այդ կողմերն է նաև, ուր կանգ է առնում նախընթաց հին մեկնողների վերադարձի ծիրը: Այս խառնուրդների և փոխազդեցութեանց հետեւանքով նոր սերունդի լեզուական ժառանգութեան մէջ պիտի գտնուէին կ'-ով և *s*-ով բազմաթիւ նոյնանիշ բառեր, որոնց պիտի կառչէին իմաստի տարբերացումներ: Միաժամանակ նոր սերունդը պիտի կարենար *h'* և *s* արտաբերել, որ հին ձայն էր, *h'* և *h*, որ

համեմատաբար նոր էր, որով կ և s պիտի լծորդ դառնային:

Այն վայրերը, ուր ենթադրեցի թէ առաջին անգամ խառնուեցան կ և S ցեղերը՝ այսօր խօսուում են լիտուայի և սլաւ լեզուները, որոնք եւրոպական լեզուների կ-ին տալիս են չ և ց կշիռ, իսկ ըստ մեր տեսութեան՝ s կշիռ, քանի որ ց-ն մի հին su է և չ-ն մի հին sչ: Եւ հետաքրքրական է, որ այդ լեզուները հնամենի կերպարանք ունեն, ինչ որ բնական է, քանի որ նրանց վարի խաւը կամ լաւ ևս՝ հիմնական շերտը S ցեղերի մնացորդներ են եղած, որոնց տիրած են կամ որոնց վրայ հղորակէս աղղած են կ ցեղի մշակութապէս բարձր և նորեկ տարրերը: Բալթիկ լեզուները ցուցադրում են «բացառիկ հնակերպութիւն» (singulier archaïsme)¹⁾ իսկ «սլաւ լեզուն ... ընդհանրապէս պահած է հնամենի կերպարանք» (un aspect générale archaïque)²⁾: Նոյն վիճակի մէջ պիտի լինէին և առաջին դաղթի հեռագնացները, որ իջան դէպի հարաւ և որ այսօր խօսում են Հինդ-Իրանեան լեզուներ. և նրանք են իրօք, որ եւրոպական կ-ին տալիս են կէս-պայթուցիկ կշիռներ, որ ըստ մեր տեսութեան ասել է՝ իբր կշիռ տալիս են այդ ձայների s բաղադրիչը կամ նրանց քայքայման հետեանքով՝ երկրորդ բաղադրիչները. — և ուրեմն մէկ կողմից սնս. ջ, հայ - ց և միւս կողմից զենդ. գ: Այսպիսով մի բան, որ կ բարբառի մէջ վերջանում էր կաս վանկով S ցեղերը պիտի արտաբերէին swa, որ ձայնաւորի չքացումով պիտի դառնար sa, իսկ սա ձուլումով՝ - ց, որով ց և կ պիտի երևային լծորդ և

¹⁾ A. Meillet. Introduction, էջ 49.

²⁾ A. Meillet. Le Slave commun, էջ 12.

պիտի կարծիւ տային, ինչպէս և տուած են, թէ կ-ն արեւելեան լեզուների մէջ հնչում է ց, կամ նրա լծորդ գ-ը հայերէնում հնչում է ծ: Հասկնալի է հիմա թէ ինչու ինչ-ինչ լեզուների մէջ as, os, us, is վախճանները պիտի չքանային. նրանք ոչ թէ ընկած, այլ ձուլուած են իրենց նախորդող պայթուցիկների հետ, իրենց յաջորդ ձայնաւորի չքացման հետեանքով: Ձայնաւորը չքացած է, իսկ բաղաձայները ձուլուած են, ինչպէս ասած եմ իմ Գ. Յուշագրի վերջը: (էջ 52). Ահաւասիկ այդ նորակազմութեանց ցանկը, որ տեսական արժէք ունի:

կ լեզու	S լեզու	Սղում	Չուլում
կաս	տաս (s ատամնային)	տս	ց
կաշ	տաշ (» »)	տշ	չ
կաս	տաս (t քմային)	տս	ծ
կաշ	տաշ (» »)	տշ	ճ

և լծորդ ձայներով և երանգների ներդաշնակումով.

դաժ	դաժ	դժ	ջ
դաղ	դաղ	դղ	ձ

և երանդապէս աններդաշնակ ձայներով, որ չէին կարող ձուլուել և ծնունդ տալ մի նոր ձայնի.

դաս	դաս	դս	—
դաշ	դաշ	դշ	—
կաղ	տաղ	տղ	—
կաժ	տաժ	տժ	—

Այս ցանկն արժէք ունի և այն դէպքերի համար, երբ չքացող ձայնաւորն ուրիշ է քան աւը. նոյն արդիւնքը պիտի տային և կիւ, ու կուս վախճանները, երբ իրենց միջի ձայնաւորը չքանար. կիւ հնչելով shu, պիտի սղէր իբր sa և պիտի ամփոփուէր իբր ց,

որովհետեւ ինչպէս ասած եմ իմ Ա. Յուշագրի մէջ կարեւորը ձայնաւորի չքացումն է և ոչ նրա երանգը (էջ 5):

Այսօր միեւնոյն լեզուի մէջ մենք հանդիպում ենք կ-չ-ց լծորդութեան. այսպէս՝ ուսերէն լիկ, լիցօ՛, լի՛չ-իկօ (= դէմք, տեսք, երեսք). բայց հանդիպում ենք և *ս ~ չ* փոխանցում. սվէս ~ սվէչա (= լոյս, մոմ): Լուց-ան-ել բայը պէտք է լոյս բառից ծագած համարել. հմ. լուս անել — ճրագը վառել. լուսել — որ նոյն իմաստն ունի: Լուց կշիռն է ուս. լուչ բառի, որ նշանակում է ճառագայթ, շող. նրանք ծագողպէս նոյն են, իրենց սոյլերն են տարբեր. տա = ց, տե = չ: Լուս տարբերակն է լոյս բառի, ուր նախաւոր յօրաջնքը խցում են երկու տարբեր լծորդ ձայներ — յ և լ: Այս ու կազմութեանց ի գուգահեռը պիտի լինէին լիս, լից, լիչ, մենք ունինք լիս, ունենք նաև լիչֆ. որ է լիչ-ք և որ նշանակում է այն ձէթի ճրագը, որ մեծ պասի կէսին, չորեքշաբթի երեկոյեան վառում են տան ննջեցեալների հոգու համար և որ ուրեմն պիտի նշանակէր ճրագներ (ք համարժէք է եր-ի իբր յոգնարար): Հայ լուց և սլաւ լուչ բառերը իրենց ձոյլ ձայների քայքայումով պիտի տային մի կողմից *ս* (ատամնային), միւս կողմից *ս* և *ե*. որով պիտի ունենայինք լուս, որ ունինք արդէն. հմ. լսնանամ, որ է՝ *լուս-ան-անամ և որ նշանակում է «ճերմակում եմ, սպիտակում եմ», և լուսն, որ է *լուս-ուն, որ նշանակում աչքի ճերմակ փառ կամ հատ. հմ. «աչքը հատ ընկաւ» բացատրութիւնը, այսինքն աչքի բբի վրայ ճերմակ բիծ երեաց: Իսկ հնարաւոր լուս ձևը պահած է պարսիկը. հմ. ԲՈՒՄՆԱՆ, որ է լոյս և ուր ԲՆ լծորդն է լ-ի (նաև մեր լեզուում, հմ. տեսել եմ — տեսե՛ր եմ) իսկ Կ-ը մի լ է: Պահած է նաև սանսկրիտը — ԲՈՒՄՆԱՆ, որ նշանակում է փայ-

լուն. հմ. մեր լուս-ան-ալ բայը: Սլաւ երեք ձևերից լիկ և լից-օ տարբեր ցեղերի բառեր պէտք է համարուին, այսինքն՝ Կ և Տ ցեղերի բառեր են դրանք. արդէն լիկ հին սլաւերէն է, իսկ լից-օ՛ ուսերէն, որ այս կէտի մէջ սլաւոնի շարունակութիւնը չէ, քանի որ *ս-ը* կ-ի փոխանցում չէ, այլ նրա թլուտտ արտաբերումը տարբեր ցեղի բերանում, իսկ լիչ-իկօ բարբառական մէկ տարբերակն է լից-օ բառի, որ ստեղծուած է միեւնոյն Տ ցեղի ծոցում. դրա պատճառը սոյլերի տարբերութիւնն է (տա=ց, տե=չ), իրենց հիմնական ձայնը նոյն ատամնային *ս-ն* է: Մի հին բառ, որ ունենար — kas վախճան, օրինակ սնակ. ro-kah = սլաշառութիւն. լիս. lau-kas = եղան կամ կովի ճակատի ճերմակ նիշ՝ Տ ցեղի բերանում պիտի հնչէր *-las* վախճանով և սղումով պիտի տար *ts*, իսկ ձուլումով *ց*. միեւնոյն Տ ցեղի մի ուրիշ բարբառում միեւնոյն վախճանը սոյլի տարբերացումով պիտի հնչէր *sawc*, պիտի սղէր իբր *sc* և պիտի ձուլուէր իբր *չ*: Այս երկու բառառների խառնուրդով կամ փոխադրեցութեամբ (բառերի փոխառումով) միեւնոյն լեզուի մէջ պիտի ստեղծուէր. կ - ց - չ լրծորդութիւն: Այս փոխանցումների ընթացքը կարող ենք այսպէս պատկերել.

Կաւս	Տաւս
	տաւս
	տաչ
	↓
	տս
	տչ
	↓
	ց
	չ

Այստեղ Կ և Տ հակադիր են, համամանակ և համարժէք. մէկը միւսի փոխանցումը չէ, այլ *ս-ը* կ-ի

Թլուառ արտաբերումն է: Թլուատների ընտանիքում է, որ տարբերացած են սոյլերը և ծագած են ցան և չան: Այդ ձևերը հոլովոյթի արդիւնք են. կ-ի համեմատութեամբ նրանք տարամանակ են. և լծորդ են իրար, որովհետեւ լծորդ ձայների անփոփոխութիւնն է:

Այս լուծումներից հետեւում է, որ չկար և չէր կարող լինել գ - ծ լծորդութիւն: Նոյներանգ ձայններն են, որ կարող են իրար լծորդել. լերկ ձայնին՝ մի ուրիշ լերկ, սոյլ ձայնին՝ մի ուրիշ սոյլ: Հետեւապէս ծան իբր լերկ՝ կարող է կ-ին զուգադրուել, իսկ ձան իբր միջակ՝ գ-ին: Կ - ծ և գ - ձ, որ նոյն է թէ՛ կ - լ (քմային, քանի որ ծան մի ձոյլ էս է) և գ - դ (քանի որ ձան մի ձոյլ դգ է) փոխանցումներ չեն, այլ հակադրութիւններ, իբր Թլուառ արտաբերում հագագային ձայների: Այդ հակադիր արտաբերումները տեղի ունէին ա՛յն ժամանակ, երբ դեռ գոյութիւն չուներին ծ, ձ, ց և նման ձոյլ ձայներ: Այդ շրջանից յետոյ միայն sau, դազ և նման վանկերը ձայնաւորի սղումով ամփոփուած են և եղերական ձայները ձուլելով՝ դարձած են ց, ձ և նման ձոյլեր:

Այստեղից հետեւում է նաեւ, որ մեր ծ, ց, ձ, չ, ց և ք ձոյլ ձայներն ունեցող բառերի և ձևերի կշիռները որոնելիս մենք կարող ենք և պէտք է դիմենք կ և գ ունեցող օտար բառերի և ձևերի, որոնց կ-ը և գ-ը Թլուատաբար կարող էին արտաբերուել իբր դ և s (իր երկու տեսակով — քմային և առամային) և համապատասխան սոյլերի կամ նրանց բնականից հ-ի հետ ձուլուելով՝ կարող էին տալ ծ, ց, ձ, ձ, ց, չ, և ք: Պարզ է նաեւ, որ մեր ձոյլ բաղաձայնների կ և գ կշիռները ամէնից աւելի սպասելի են եւրոպական ցամաքի բնիկ հին լեզուների մէջ — յատկապէս յոյն ու լատին —, իսկ Արեւելեան լեզուների

մէջ, որ առաւելապէս S ցեղերի ստեղծագործութիւն են, պարզ է որ մեր ձոյլ ձայներին սպասելի են ձոյլ կշիռներ: Միաժամանակ անհնարին չէ նաեւ, որ միւս նոյն լեզուի մէջ պատահեն կ - չ, ց «լծորդութիւններ», ինչպէս մեր պագ-ն (*պակ-ն) ու պաչ-ը, բայց դրանք կ ցեղերի ժառանգութիւն են, որ վերապրում են հին դարերից, ինչպէս մամոնտի ոսկորները Հայաստանում և Սիբիրում:

Այսպիսի մի վերապրում կարելի է համարել մեր վեգն ու վեճը. հմ. «ի վէգ գալ», որ նշանակում է դէմ կենալ — հակառակիլ և ուրեմն վիճել: Վեճին կարող էր զուգադրուիլ մի բարբառական *վէկ, ուր կ-ը Թլուատաբար արտաբերուած է վէլ (քմային s): Իր երբեմնի is, os, us կամ as վախճանի ձայնաւորի չքացումով և s-ը շնչումին անցնելով՝ ծագած է եւ խումբը, որ ձուլումով տուած է ց: Կարող էր տալ նաեւ ծ և բառը հնչէր վէծ, եթէ as, is և այլ վախճանների s-ը անփոփոխ մնար և ծագէր ts խումբ, որ ձուլուած մով պիտի տար ծ: Այն ժամանակ դա կը համարուէր գ - ծ փոխանցում, բայց ոչ թէ լեզուից լեզու, այլ միւսնոյն լեզուի մի բարբառից միւսը: Հետաքրքրական է, որ վէճ բառի ցան նոյն քմային է-ն ունի իբր հիմք, ինչպէս այժմ բառի ծան, որ է ts:

Մեր մի բարբառի և յոյն ու սանսկրիտ լեզուների միւսնոյն գ ձայնին մեր Թլուառ բարբառները տուած են քմային լ կշիռ և եթէ երկու դէպքում ևս մենք ծ չունենք, պատճառն այն է, որ s ձայնը մի դէպքում մնացած է անվթար, իսկ միւս դէպքում անցած է շ-ի, որով ստեղծուած են էս և էս խմբեր և

ամփոփուած են իբր ծ և ճ¹⁾:

Մի կէտ ևս: Այն ցեղերը, որ ենթադրեցինք թէ Տ լեզուն են խօսած, իրենց լեզուի մէջ այսօր ունեն կ: Ունին, բայց ե՞րբ են ստեղծած, եթէ ստեղծած են և եթէ կ ցեղի խառնուրդով չէ, որ կ ձայնը դարձած է նոր սերունդների սեփականութիւն: Չայնր ստեղծելու կարողութիւնը Եւրոպական ցեղերի սեփականութիւնը չէր, ինչպէս և թլուատ տարրեր նրանց մէջ պակաս չեն եղած: Չմոռանանք, որ իմ ենթադրութեամբ այդ վիճակը համաճարած էր մի ժամանակ, նախ քան կ-ի ստեղծումը, որ Արեւելքում ենթադրում եմ թէ աւելի ուշ տեղի պիտի ունենար, քան Արեւմուտքում: Դրանով պէտք է մեկնել, որ եթէ Արեւելքը Արեւմուտքի գ-ին տալիս է կէս. պայթուցիկ և քայքայուն. պայթուցիկ²⁾ կշիռ, փոխադարձաբար

¹⁾ Հմ. Նանաչեմ և ծանեայ. Բ. Յուշադիր, լջ 29. Թուում է թէ Տ ցեղի թլուատ անդամը ճգնելով իր լսած անսովոր կ կոկորդային ձայնն արտաբերել, իր միակ s-ը քաշած է դէպի վերնաքիմը, որով տուած է նրան քմային կերպարանք, առանց յաջողելու սա. կայն հասնել ա'յն կէտին, ուր կաղմուում է կ-ը: Մա. նաւանդ դժուար էր s-ը քաշել դէպի յետ այն ժամանակ, երբ հետեւորդը ի էր, որ կաղմուում է բերանի մուտքի մօտերը կամ ե էր, որ այլ բան չէր հին ժամանակ քա մի իս, որ յետոյ ձուլումով դարձաւ յձ - ե: Կարծում եմ ա'յս է պատճառը, որ ke, ki տուած են չե չի կամ ցե ցի, ձոյլ ձայների բաղադրիչ սոյլի տարբերացման հետեւանքով. տա - ց, տե - չ:

²⁾ Այսինքն մի սոյլ կամ ի, որ մի վաղեմի կէս. պայթուցիկի քայքայման հետեւանք է, ինչպէս ա-ն կակիծ բառի մէջ:

Արեւմուտքն Արեւելքի պայթուցիկին կամ կէս. պայթուցիկին տալիս է հազագային կշիռ: Այս խնդիրը լի. ուլին սպառելու համար մանրապատում քննութեանց մէջ պէտք է մտնել, որ մեզ շա. տ հետունքը կը տա. նի: Մենք ջանացինք ուրուագծել մի տեսութիւն կ - s (կամ որ նոյն է կ - չ, ց) «լծորդութեան» ծագման մասին և մեր միտքը պարզել մի քանի օրինակներով: Առժամապէս այսքանը բաւ է:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Տեսութիւն ձոյլ բաղաձայների	1—2
Յ	3—23
Չ	23—26
Ճ, Ծ	26—30
Թ	30—32
Փ	32—34
Ռ	35—36
Ձ	37—52
2. Տեսութիւն լծորդութեան	53—103
Մանրութ	
Ոսկերիչ	104—105
Ջոջոխէթի—զժոխք	105—106
3. Տեսութիւն ի և ու կազմութեանց	107—118
Հաց—մաց	119—125
4. Տեսութիւն իաւ և իաւի կազմութեանց	127—144
5. Տեսութիւն իչ և չի կազմութեանց	145—154
6. Տեսութիւն ա՛ւա կազմութեանց	
Ճանաչել—ծանօթ	155—164
7. Գործիական բունք և նի սեռական	165—186
8. Ուղղում և լրացում	187—
9. Օգն, աւագ, անաւագ, աւագանի	
ա՛ւա ա՛ւա ո	189—194
10. Շառայլ և շառաւիղ (յ - ւ, ղ - լ)	194—195
11. Գործիական մակբայների տարբերակ-	
ները. (յ—ւ)	196—201
12. Յոյնի és և os վախճանները. (յ—ւ)	201—203
13. Լուրջ—լուրթ (ջ—թ)	203—204
14. Տեսութիւն համատարած թիւաւորութ-	
եան	205—227



912-2002

Յուշագրերիս սպագրութեան ծախքերը գոցելու
համար շնորհակալութեամբ ստացած եմ՝

	ս.ո.
Հալեպեն՝ Հայէ մը	1.—
Տիկ. Զ. Շանթի միջոցով	27.50
Ամերիկայէն, Տիկ. Վ. Քալանթար-Նալպանեանէ	5.—
Ամերիկայէն, Գերապասիւ Տիրայր Եպիսկոպոսէն	
3 տոլ.	5.58
Գումար՝	39.08
Մնաց տղ գումար (ԺԱ. պրակէն)՝	109.21
Մնացորդ	148.29

Ն. ԱՂԲԱԼԵԱՆ «ԲԱՆԱՍԷՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ»

Լոյս տեսած են Կապուցիներու պրակ Ա — ԺԲ

Ամէն պրակի գինն է 1 ֆրանք

ԳԻՆ Ի ՅՐԱՆՔ